

Ռ. Ն. ՇԱՂՈՒՆՑ, Մամուլի և հրատարակչության լեզուն, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատարակչություն, 1987, 232 էջ:

Այն միտումը, որ գիտական շատ հիմնարկներ, այդ թվում նաև լեզվի ինստիտուտը, ձգտում են իրենց գործունեությանը լինել նաև գործնական-կիրառական, արտացոլել կյանքի պահանջը, առաջադրել և լուծել կենսական անհրաժեշտություն ունեցող հարցեր, առավել նկատելի է դարձել վերջին տասնամյակներում: ՀՍՄՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված Ռ. Շաղունցի «Մամուլի և հրատարակչության լեզուն» գիրքը ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն ունեցող մի աշխատություն է, որն իր բնույթով, թերևս, եզակի է: Հայտնի է, թե ուղիղ, մամուլի աշխատողները, հրատարակիչները որքան շատ կարիք ունեն գործնական արժեք ունեցող տեղեկատուների, բառարանների: Նրանք իրենց աշխատանքում գործ ունեն ամեն օր, նույնիսկ ամեն ժամ ստեղծվող բառերի, բառիմաստների հետ և հաճախ են զգում օժանդակ ձեռնարկների կարիք՝ ճիշտ ու սխալ բառազտագործումների տարբերակելու, նոր դարձվածքներն ու կապակցությունները տեղին գործածելու համար: Թեև Ռ. Շաղունցի այս աշխատությունը չի կարող, ինչ խոսք, լրացնել այն մեծ բացը, որ մեզանում առկա է նման գրքեր ու բառարաններ շունենալու պատճառով, այնուամենայնիվ նախանշում է անհրաժեշտ գործի սկիզբը: Մամուլի աշխատողների համար նման ձեռնարկներ չկան թերևս այն պարզ պատճառով, որ այդպիսիք ստեղծելու համար հարկավոր է հետևողականություն ու ընդազող հետաքրքրություն այնպիսի հաճախական մի երևույթի նկատմամբ, ինչպիսին պարբերական մամուլն է: Հեղինակի ուսումնասիրության համար հիմք են ծառայել ԱՍՊԿ-ական Հայաստան, ԵՍՀՄ-ի և ԵՄԿԿ-ի Երևանի և Անվանգարգ լրագրերի էջերում 1979—1983 թվականների համարներում լույս տեսած նյութերը: Հեղինակը բարեխղճությամբ հավաքել է իր նյութը, մշակել ու քննության առել լեզվական փաստերը (որոնցում արտացոլում են գտնում լեզվական ու արտալեզվական ամենօրա փոփոխությունները), հետևել պարբերական մամուլի լեզվական գործընթացին:

Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում բառիմաստային խմբերը դասակարգելիս հեղինակը առանձնացրել է երեք հիմնական խումբ՝ մասնագիտական բառեր, զնահատողական բառեր և լրագրային բառեր: Առաջին հայացքից նման դասակարգումը այնքան էլ միատարր չի թվում տերմինային առումով, բայց ահա թերթում ես մամուլը, և ակնհայտ է դառնում, որ, իսկապես, հասարակական-քաղաքական, բժշկագիտական, ռազմական, մարզական, աշխարհագրական ու արվեստի շատ տերմիններ են հանդիպում, որոնք տերմինահամակարգից դուրս գործածվում են փոխաբերաբար՝ դառնալով լրագրային լեզվի ակտիվ տարրեր: Մեծ թիվ են կազմում նաև այն բառերը, որոնք օժտված են զնահատողական, նաև՝ ոճական որոշակի երանգով: Իսկ լրագրային կազմած բառերով, ըստ հեղինակի, իրացվում են զնահատողական ու մասնագիտական բառերի գործառնությունները: Հենց սրանք էլ մեծ հաճախականությամբ, ավելի քան զնահատողական ու մասնագիտական բառերը, կիրառվում են լրագրերի էջերում, լրագրային բառերը, անկախ իրենց ձևարանական-քերականական հատկանիշներից, որոնց նույնպես անդրադառնում է հեղինակը, հաճախական են և ի վերջո կարող են սկայուն կապակցություններ կազմել բառիմաստային մյուս երկու խմբերի բառերի հետ:

Աշխատության «Դարձվածքները լրագրային լեզվում» գլխին ծանոթանալիս լրագրողներին ավելի կհետաքրքրի դարձվածքների ձևափոխությունների մասին բաժինը: Հեղինակը դարձվածքների բառային կազմում փոփոխություն մտցնելիս զգուշավորության է կոչում. «Դարձվածքների նորմատիվ կիրառությունից կատարված տարբեր բնույթի շեղումները հաճախ հանգեցնում են խոսքի ավանդական արտահայտությունների անհատական տարբերակների» (էջ 134): Եվ խորատեսում է, երբ «...ժուռնալիստը ցանկանալով հաղորդել շատ կարճ, բայց բովանդակալից ինֆորմացիա, դիմում է դարձվածքների կազմում առկա բաղադրիչների զգուշավոր կրճատման կամ, հակառակը, ցանկանալով ավելի մանրամասն բացատրել, հասկանալի դարձնել իր ասածը, դիմում է հավելումների և լրացուցիչ տարրերի ավելացման: Հաճախ ժուռնալիստը ստեղծում է նոր արտահայտություններ» (էջ 135):

Գիտական-լեզվաբանական առումով կարևոր է «Բառիմաստային հիմնական խմբերը լրա-

դրերի էջերում» գլուխը, իսկ դործնական տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես «Հայերենին անհարազատ և սխալ ձևերի կիրառություններ» և «Նորարանությունները լրագրերի էջերում» խորագրով վերջին երկու գլուխները: Ռ. Շալունցը «Հայերենին անհարազատ և սխալ ձևերի կիրառությունը» գլխում, հիշատակելով գրեթե այն բոլոր աշխատանքները, որոնք այս բնագավառում որոշակի կարևորություն ունեն, բերում է լրագրերի լեզվում հանդիպող բազմաթիվ նոր օրինակներ, որոնք տեղ չեն գտել այդ բնույթի աշխատանքներում: Դրանք խմբավորված են «Անհարկի օտարաբանություններ», «Անհարկի պատճենումներ և ոճեր», «Սխալ և անհաշող բառընտրություն» բաժիններում:

Փանի որ լրագրի լեզուն որոշ իմաստով մեր առօրյա լեզուն է, երբեմն նաև բանավոր խոսքի դրամոված տարբերակը, ուստի նրանում արտացոլված են մեծ հաճախականություն ունեցող սխալ ձևերը: Մինչդեռ մինչ այդ հրապարակված նման աշխատանքներում տեղ են գտնում այս էլամ այն անհատի անձնական նկատառումները բանավոր լեզվի աղավաղումների մասին: «Նորարանությունները լրագրերի լեզվում» գլխի «Իմաստային նորարանություններ» բաժնում ներկայացված բառերը մեկ անգամ ևս վկայում են այն գերի մասին, որ ունի մամուլը ծանոթ բառերին ոճական նոր նրբերանգներ, նույնիսկ անսպասելի իմաստներ հաղորդելու գործում: Հայերենի պատմության հնագույն շրջանից եկած բառերն իրրե ժամանակակից երևույթների ու հասկացությունների, նոր ստեղծված իրողությունների անվանումներ գործածելու և դրանք արմատավորելու դեպքեր մամուլում հաճախ են հանդիպում: Իմաստային նորարանությունները իրրե և լեզվական իրողություն խրախուսելի են ամենից առաջ այն պատճառով, որ փակում են անհարկի փոխառությունների ճանապարհը:

Գրքի վերջում տեղ է գտել նոր բառերի ու կապակցությունների 400-ից ավելի միավոր պարունակող ցանկ, որն օգտակար կարող է լինել իմաստային ճշգրտության ապահովման, ինչպես նաև տերմինային միօրինակության համար: Նորարանությունների գերակշիռ մասը հասարակական-քաղաքական, գիտաճյուղերի այլ համակարգերի տերմիններ են:

Գիտագործնական նշանակության այս դիրքը հատկապես տեղեկատու առումով կշահեր, եթե ունենար նաև օգտագործված տերմինների, ինչպես և դրական ճանապարհով ու ժողովրդախոսակցական լեզվից անցած դարձվածքների համապատասխան նշումներով առանձին ցանկեր: Աշխատության մեջ թեև խոսվում է հայերեն ստանդարտի մասին, բայց չեն նշվում դրա լեզվական յուրահատկությունները: Որոշ օտար բառեր հեղինակը ներկայացնում է մենիմաստ, մինչդեռ դրանք արդեն բազմիմաստ են:

Հայտնի պատճառներով և՛ գործնական արժեք ունեցող հրատարակությունները, և՛ մամուլի լեզվին վերաբերող հայերեն աշխատանքները իրենց թվով ու թարմությամբ չեն կարող համեմատվել ռուսերեն նման հրատարակությունների հետ: Բայց նույնիսկ այն, ինչ խիստ անհրաժեշտ է մամուլի աշխատողներին ամենօրյա աշխատանքում, ցավոք, չի արվում: Ահա այս պայմաններում է, որ տեղեկատու-գործնական ուրույն արժեք է ստանում «Մամուլի և հրատարակախոսության լեզուն» գիրքը:

ՄԱՐԳԱՐԻՏ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ